

ՀՀ ԳԱԱ «ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԱԿ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ

BACILLUS ՑԵՂԻ ՄԱՆՐԷՆԵՐԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԺԵՔ
ՈՒՆԵՑՈՂ ՌԵԿՈՄԲԻՆԱՆՏ α -ԱՄԻԼԱԶՆԵՐԻ
ՇՏԱՄ-ԱՐՏԱԴՐԻԶՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՖԵՐՄԵՆՏՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ

Գ.00.07 - «Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ
կենսաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

SPC «ARMBIOTECHNOLOGY» NAS RA

SOGHOMONYAN TIGRAN MERUZHAN

PRODUCTION OF TECHNOLOGICALLY VALUABLE RECOMBINANT α -AMYLASE
STRAINS-PRODUCERS FROM BACTERIA OF THE GENUS *BACILLUS* AND
CHARACTERIZATION OF THE CORRESPONDING ENZYMES

SYNOPSIS

of dissertation for conferring of scientific degree of
Candidate of Biological Science (PhD)
in the specialty 03.00.07 – «Microbiology. biotechnology»

YEREVAN – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ -ում:

Գիտական ղեկավար՝ Կ.գ.թ. Արթուր Ալբերտի Համբարձումյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Կ.գ.դ., պրոֆեսոր
Հրաչյա Գարեգինի Հովհաննիսյան
Կ.գ.թ. Վարդան Կառլենի Գասպարյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. հոկտեմբերի 18-ին
ժամը 15⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի
Կենսատեխնոլոգիայի 018 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0056, ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան 14, հեռ./ֆաքս՝ (+374 10) 65 41 80:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
ԳԱԿ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024թ. սեպտեմբերի 18-ին:

018 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, Կ.գ.թ.՝

Գ.Ե. Ավետիսովա

The theme of dissertation has been approved at SPC "Armbiotechnology" NAS RA.

Scientific supervisor: PhD of Biological Sciences Artur Hambardzumyan

Official opponents: Dr. of Biological Sciences, Prof. Hrachya Hovhannisyan

PhD of Biological Sciences Vardan Gasparyan

Leading organization: Institute of Molecular Biology NAS RA

The defense of the dissertation will be held on 18th of October, 2024, at 15⁰⁰ at the
session of 018 Specialized Council on Biotechnology of HESC of RA at SPC
"Armbiotechnology" NAS RA.

Address: 0056, RA, Yerevan, 14 Gyurjyan str., tel./fax (+374 10) 65 41 80.

The dissertation is available at the library of SPC "Armbiotechnology" NAS RA.

The synopsis has been sent on 18th of September, 2024.

Scientific Secretary of 018 Specialized Council, PhD

G.E. Avetisova

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ատենախոտության թեմայի արդիականությունը: α -Ամիլազները (E.C. 3.2.1.1.) օսլան քայքայող ֆերմենտներ են, որոնք հիդրոլիզում են պոլիսախարիդների ներքին α -1,4-Օ-գլիկոզիդային կապերը՝ պահպանելով պրոդուկտների α -անոմերային կոնֆիգուրացիան: α -Ամիլազների մեծ մասը մետաղաֆերմենտներ են, որոնք իրենց ակտիվության, կառուցվածքային ամբողջականության և կայունության համար պահանջում են կալցիումի իոններ (Ca^{2+}): Ըստ ամինաթթվային հաջորդականությունների նմանության դրանք պատկանում են գլիկոզիդ հիդրոլազային ֆերմենտների 13 (GH-13) ընտանիքին [Henrissat, 1991]: Ամիլազներն ամենակարևոր արդյունաբերական ֆերմենտներից են, որոնք ունեն լայն կիրառություն՝ սկսած օսլայի փոխակերպումից շաքարային օշարակների մինչև դեղագործական արդյունաբերության համար ցիկլոդեքստրանների արտադրություն: Դրանք ֆերմենտների համաշխարհային արտադրության 30 %-ն են կազմում [Van der Maarel et al., 2002]: Լուծվող օսլայի, ամիլոզի, ամիլոպեկտինի, գլիկոզենի, մալտոդեքստրինի, ցիկլոդեքստրինների և այլ սուբստրատների նկատմամբ ամիլազների սուբստրատային սպեցիֆիկությունների հետազոտությունները ներկայումս էլ արժեքավոր գիտական հետազոտությունների առարկա են հանդիսանում [Aguilar et al., 2000, Kunamneni and Singh, 2005]: Հում օսլան հիդրոլիզող նոր α -ամիլազների փնտրտուքը (դրանք կիրառող տեխնոլոգիաներում բացակայում է օսլայի դոնորդացման էներգատար էտապը) ժամանակակից կենսատեխնոլոգիայի հրատապ խնդիրներից է [Okolo et al, 1995, Puspasari et al., 2013, Mitsui et al., 2005]:

Տարբեր արտադրություններում տարաբնույթ ֆիզիկաքիմիական և կենսաքիմիական բնութագրերով α -ամիլազների պահանջարկը պայմանավորում է ռեկոմբինանտ տեխնոլոգիաների [Kaneko et al., 1996, Knox et al., 2004, Filler et al., 1998, Leveque et al., 2000] և ֆերմենտային ինժեներիայի կիրառմամբ նոր բնութագրերով ֆերմենտների նպատակային փնտրտուքը [Chen et al., 2015, Liu et al. 2015]: Այսպես, կետային մուտագենեզի կիրառմամբ *B. stearothermophilus*-ի α -ամիլազի արգինին179 և գլիցին180 ամինաթթուների դելեցիայի արդյունքում ստացվել և նկարագրվել է բարելավված բնութագրերով ռեկոմբինանտ ֆերմենտ (բարձր ջերմակայունություն, ցածր pH-ում աշխատելու ունակություն, Ca-ի պահանջարկի նվազում) [Gai et al., 2018]: *B. stearothermophilus*-ի α -ամիլազի ազոսնշանային պեպտիդի օպտիմալացման և համապատասխան շապերոնի գերեքսպրեսիայի շնորհիվ հնարավոր է եղել հասնել արտազատվող ֆերմենտի գերեքսպրեսիային (9200 միավոր/մլ) [Yao et al., 2019]:

Այսպիսով, օսլա պարունակող հումքի վերամշակման պրոցեսներում լայն կիրառություն ունեցող նոր, բարելավված բնութագրերով α -ամիլազների ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների և ֆերմենտային ձևերի ստացումն ու բնութագրումն արդիական խնդիր է, և այս ուղղությամբ կիրառվող ջանքերը շարունակում են պահանջված մնալ կենսատեխնոլոգիական արտադրությունների կողմից:

Աշխատանքի նպատակը *Bacillus* ցեղի մանրէներից տեխնոլոգիական արժեք ունեցող, նոր, արտազատվող, ռեկոմբինանտ α -ամիլազների շտամ-արտադրիչների և ֆերմենտային պատրաստուկների ստացումն է, դրանց բնութագրումն ու արտադրության տեխնոլոգիաների մշակումը:

Նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ Մանրէների ավանդադրման կենտրոն հիմնարկի (ՄԱԿ) *Bacillus amyloliquefaciens* MDC 1974 և *Bacillus subtilis* MDC 3500 շտամների α -ամիլազի գեների մոլեկուլային կլոնավորում *Escherichia coli* / *B. subtilis* pBE-S մաքրքային վեկտորի կազմում:
- Ստացված ռեկոմբինանտ պլազմիդներով *B. subtilis* RIK 1285 շտամի բջիջների տրանսֆորմացմամբ *B. amyloliquefaciens* MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների α -ամիլազի գեները կրող շտամների ստացում:
- Ստացված ռեկոմբինանտ շտամների աճի միջավայրերի և պայմանների օպտիմալացում՝ նպատակային ամիլազների առավելագույն քանակների ստացման նպատակով: Կուլտուրալ հեղուկներից ռեկոմբինանտ α -ամիլազների մասնակի մաքրման մեթոդների մշակում:
- Մինթեզված արտազատվող ռեկոմբինանտ ֆերմենտների ֆիզիկաքիմիական և կատալիտիկ բնութագրերի ուսումնասիրում (ֆերմենտների մոլեկուլային բնութագրում, ջերմաստիճանային և pH-օպտիմումների, ջերմակայունության և pH-ից ջերմակայունության կախման հետազոտում, ամիլազների բնութագրում ըստ սուբստրատային սպեցիֆիկության, հում օսլան քայքայելու ունակության, ռեակցիայի տարման խորության և այլն):
- Ռեկոմբինանտ α -ամիլազների փորձարարական (100 μ) արտադրության արդյունավետ տեխնոլոգիաների (աերացիայի ռեժիմ, ջերմաստիճանային ռեժիմ, ֆերմենտացիայի տևողություն), ֆերմենտների անջատման և պահպանման տեխնոլոգիաների մշակում:

Աշխատանքի գիտական նորոյթը

- «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ Մանրէների ավանդադրման կենտրոնի *B. amyloliquefaciens* MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների α -ամիլազի գեների հիման վրա մեր տարածաշրջանում առաջին անգամ *B. subtilis* RIK 1285 շտամի հիման վրա ստեղծվել են մինչև 2000 միավոր/մլ ակտիվությամբ համապատասխան ֆերմենտներն արտազատող ռեկոմբինանտ շտամ-արտադրիչներ:
- ՀՀ-ում առաջին անգամ ներդրվել է օղակաձև ԴՆԹ-ի մոլեկուլում գեների համակցման Գիբսոնի մեթոդը (այս մեթոդով են կառուցվել նպատակային ամիլազների գեները կրող ռեկոմբինանտ պլազմիդները):
- Մոդիֆիկացվել և էականորեն բարելավվել է Միլերի ռեդուկցող շաքարների չափման դինիտրոսալիցիլաթթվի մեթոդը:
- Օպտիմալացվել են α -ամիլազների ստացված շտամ-արտադրիչների աճի պայմանները: Մշակվել են կուլտուրալ հեղուկներից ռեկոմբինանտ α -ամիլազների մասնակի մաքրման մեթոդներ:
- Ուսումնասիրվել են արտազատվող ռեկոմբինանտ ֆերմենտների ֆիզիկաքիմիական և կատալիտիկ բնութագրերը:
- Մշակվել են ռեկոմբինանտ α -ամիլազների պիլոտային (փորձարարական) արտադրության, անջատման և պահպանման արդյունավետ տեխնոլոգիաներ:

Աշխատանքի գործնական նշանակությունը.

- *B. amyloliquefaciens* MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների α -ամիլազի գեները կրող *B. subtilis* RIK 1285_amy1974 և *B. subtilis* RIK 1285_amy3500 ռեկոմբինանտ շտամներն ավանդադրվել են ՄԱԿ-ում, համապատասխանաբար, MDC 11327 և MDC 11328 համարների ներքո և կարող են հիմք հանդիսանալ համապատասխան բնութագրերով ֆերմենտների արտադրությունների կազմակերպման համար:
- Օդակաձև ԴՆԹ-ի մոլեկուլում գեների համակցման Գիբսոնի մեթոդը կարող է լայնորեն օգտագործվել միևնույն վեկտորի կազմում՝ ինչպես առանձին գեների, այնպես էլ գեների խմբի մոդուլային կլոնավորման նպատակով:
- Դինիտրոսալիցիլաթթվի հիման վրա ռեդուկցող շաքարների չափման մոդիֆիկացված մեթոդը կարող է հաջողությամբ կիրառվել գիտության և արդյունաբերության ամենատարբեր բնագավառներում:
- Ռեկոմբինանտ α -ամիլազների շտամ-արտադրիչների օպտիմալացված աճի պայմանների մասշտաբավորմամբ կարելի է մշակել անհրաժեշտ քանակի ֆերմենտների ստացման տեխնոլոգիաներ: Մաքրման մեթոդների մասշտաբավորմամբ կուլտուրալ հեղուկներից կարելի է ստանալ անհրաժեշտ մաքրության ռեկոմբինանտ α -ամիլազների պատրաստուկներ:
- Ռեկոմբինանտ ֆերմենտների ֆիզիկաքիմիական և կատալիտիկ բնութագրերի իմացությունը կարող է հիմք հանդիսանալ այդ α -ամիլազների նպատակային կիրառման համար:
- Ռեկոմբինանտ α -ամիլազների փորձարարական արտադրության, անջատման և պահպանման մշակված տեխնոլոգիաները կարող են հիմք հանդիսանալ այս ֆերմենտների ստացման տեխնոլոգիական գործընթացների համար:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

- *B. amyloliquefaciens* MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների α -ամիլազի գեների մոլեկուլային կլոնավորումը *E. coli* / *B. subtilis* pBE-S մաքրքային վեկտորի կազմում:
- *B. amyloliquefaciens* MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների արտազատվող α -ամիլազի գեները կրող *B. subtilis* RIK 1285_amy1974 և *B. subtilis* RIK 1285_amy3500 շտամների ստացումը:
- *B. subtilis* RIK 1285_amy1974 և *B. subtilis* RIK 1285_amy3500 շտամների աճի միջավայրերի և պայմանների օպտիմալացումը նպատակային ամիլազների առավելագույն քանակների ստացման նպատակով:
- Կուլտուրալ հեղուկներից ռեկոմբինանտ α -ամիլազների մասնակի մաքրման մեթոդների մշակումը:
- Մինթեզված արտազատվող ռեկոմբինանտ ֆերմենտների ֆիզիկաքիմիական և կատալիտիկ բնութագրերի ուսումնասիրումը:
- Ռեկոմբինանտ α -ամիլազների փորձարարական արտադրության արդյունավետ տեխնոլոգիաների մշակումը:
- Ֆերմենտների անջատման և պահպանման տեխնոլոգիաների մշակումը:

Ատենախոսական աշխատանքի կապը գիտական թեմաների հետ: Աշխատանքը կատարվել է բազային ֆինանսավորմամբ թեմայի, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 13-2I359, Երիտասարդ գիտնականների աջակցության 16YR-2I016 և Ասպիրանտների և երիտասարդ հայտարարների հետազոտությունների աջակցության 21AA-2I029 դրամաշնորհների շրջանակներում:

Հրատարակված աշխատությունները: Ատենախոսության մեջ շարադրված հետազոտության արդյունքները հրատարակված են 4 գիտական աշխատանքներում՝ 3 հոդվածներ, որոնցից մեկը առանց համահեղինակների և 1 միջազգային գիտաժողովի թեզիս:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսական աշխատանքը շարադրված է 128 էջի վրա, ներառում է 43 նկար և 9 աղյուսակ, 2 հավելված: Ատենախոսությունը կազմված է «Հապավումների ցանկ», «Ներածություն», «Գրականության ակնարկ», «Հետազոտության նյութեր և մեթոդներ», «Արդյունքներ և քննարկում», «Ամփոփում», «Եզրակացություններ», «Գրականության ցանկ» բաժիններից:

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Գլուխ 1-ում ներկայացված է ածխաջրերի վրա ներգործող ֆերմենտների (CAZY) տեսակները, դասակարգումը, առանձնահատկությունները, գլիկոզիդ հիդրոլազների ընտանիքները, ենթաընտանիքները և α -ամիլազը, որպես այդ ընտանիքի անդամ: Նկարագրվել են α -ամիլազների ֆունկցիոնալ և կառուցվածքային առանձնահատկությունները, բջջից արտազատման մեխանիզմները: Մանրամասնորեն ներկայացվել մանրէային ծագման α -ամիլազների ֆիզիկաքիմիական և կատալիտիկ բնորոշագրերը: Ներկայացված են նաև ռեկոմբինանտ α -ամիլազների ստացման մեթոդները, ինչպես նաև մեծածավալ արտադրության հիմնական տեխնոլոգիական մոտեցումները:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Հետազոտության օբյեկտները: Որպես α -ամիլազի գենի կրող միկրոօրգանիզմներ են հանդիսացել «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի Մանրէների ավանդադրման կենտրոնի կողմից տրամադրված *B. amyloliquefaciens* MDC1974 և *B. subtilis* MDC3500 շտամները: «Takara Bio» ընկերությունից ձեռք բերված ցածր պրոտեազային ակտիվությամբ *B. subtilis* RIK 1285 շտամը, օգտագործվել է որպես էքսպրեսիոն վեկտորի ռեցիպիենտ շտամ: *E. coli* Top10 շտամը օգտագործվել է էքսպրեսիոն վեկտորի նախնական տրանսֆորմացման և բազմացման նպատակով: pBE-S մաքրաքային վեկտորն օգտագործվել է α -ամիլազի գենի կլոնավորման և արտաբջջային էքսպրեսման համար:

ԴՆԹ-ի անջատում և նպատակային գեների կլոնավորում pBE-S վեկտորի կազմում: Շտամներից գենոմային ԴՆԹ-ների անջատումներն իրականացվել է «Monarch»-ի գենոմային ԴՆԹ-ի անջատման լրակազմով համաձայն արտադրողի հրահանգների: α -Ամիլազի *amy1974* և *amy3500* (սեփական ազդանշանային պեպտիդի առկայության դեպքում համապատասխանաբար *amy1974sig* և *amy3500sig*) Benchling ծրագրի

կիրառամաբ նախագծված պրայմերների գույգերը օգտագործվել են գենոմային ԴՆԹ-ներից ամիլազի գեների ՊՇՌ ամպլիֆիկացման համար: Կլոնավորումն իրականացվել է Գիբսոնի համակցման մեթոդով [Gibson et al., 2009]: Սկզբում pBE-S վեկտորը կրկնակի ռեստրիկցիայի է ենթարկվել NdeI և XbaI ռեստրիկտազների ազդեցությամբ համաձայն արտադրողի ցուցումների (New England Biolabs): Գծայնացված վեկտորը և ամպլիֆիկացված գեները ռեակցիոն խառնուրդ են ներմուծվել առաջարկվող հարաբերակցությամբ և 10 մկլ վերջնական ծավալով: Այնուհետև, α -ամիլազի գեների կլոնավորման ռեակցիան իրականացվել է NEBuilder® HiFi DNA Assembly Master Mix-ի միջոցով 50°C ջերմաստիճանում՝ հետևելով արտադրողի հրահանգներին:

B. subtilis RIK 1285 շտամի բջիջների տրանսֆորմացում ստացված ռեկոմբինանտ պլազմիդներով և նպատակային շտամ-արտադրիչների ստացում: Ստացված pBE-S_amy1974sig, pBE-S_amy1974, pBE-S_amy3500sig և pBE-S_amy3500 ռեկոմբինանտ պլազմիդներն անմիջապես կլոնավորման ռեակցիոն խառնուրդներից ջերմային շոկի մեթոդով տրանսֆորմացվել են *E. coli* Top 10-ի բջիջներում: Նպատակային գեները կրող բջիջներն ընտրվել են գաղութային ՊՇՌ-ի մեթոդով: Ընտրված գաղութներից ռեկոմբինանտ պլազմիդներն անջատվել են «QIAGEN»-ի QIAprep Spin Miniprep լրակազմով ըստ արտադրողի հրահանգների: Ստացված ռեկոմբինանտ պլազմիդներով *B. subtilis* RIK 1285 շտամի բջիջների տրանսֆորմացիայով ստացվել են ամիլազի գեները կրող ռեկոմբինանտ շտամները:

Ռեկոմբինանտ ամիլազային շտամների ֆերմենտացման միջավայրերի և պայմանների օպտիմալացում: Ռեկոմբինանտ շտամների α -ամիլազների առավելագույն էքսպրեսիայի հասնելու համար օգտագործվել են 5 տարբեր ֆերմենտացման միջավայրեր, որոնք ունեցել են նույն կազմը, տարբերվելով միայն օրգանական ազոտի աղբյուրներով: Ֆերմենտացումներն իրականացվել են 80ժ, 33°C ջերմաստիճանում, pH 7,2, 220 պտույտ/րոպե պայմաններում: Ամիլազի էլքի վրա սեփական ազդանշանային պեպտիդի առկայության, միջավայրի աերացիայի ինտենսիվության և կանամիցինի կոնցենտրացիայի ազդեցության փորձերում օգտագործվել է ընտրված օպտիմալ T9 սննդամիջավայրը: Աերացիայից կախված ամիլազի սինթեզն ուսումնասիրելու համար ստացված ռեկոմբինանտ շտամները նշված պայմաններում ֆերմենտացվել են 10, 20 և 70 մլ ծավալով միջավայր պարունակող կոլբաներում: Միջավայրում կանամիցինի կոնցենտրացիայից կախված ամիլազի արտադրության մակարդակը գնահատելու համար (վերը նշված պայմաններում), 20 մլ սննդամիջավայրում՝ կանամիցինի 10 մգ/լ, 30 մգ/լ և առանց կանամիցինի առկայության պայմաններում իրականացվել է ստացված շտամ-արտադրիչների ֆերմենտացում:

Ֆերմենտային ակտիվության և սպիտակուցի քանակի որոշման մեթոդներ: Կուլտուրալ հեղուկում արտազատվող ֆերմենտային ակտիվությունը որոշվել է ըստ օպալի հիդրոլիզի ընթացքում առաջացող ռեդուկցող խմբերի քանակի: Այդ նպատակով օգտագործվել է Միլլերի եղանակի մոդիֆիկացված տարբերակը [Soghomonyan, 2024]: Սպիտակուցի քանակությունը գնահատվել է Գրովսի և Դելվիսի մեթոդով [Peterson 1983]: Բակտերիալ կենսազանգվածի չոր քաշը որոշվել է կշռային եղանակով, 80°C ջերմաստիճանում 12 ժամ չորացնելուց հետո [An et al., 2018]:

α-Ամիլազի ֆիզիկաքիմիական բնութագրերի որոշման մեթոդներ: Բոլոր չորս ռեկոմբինանտ α-ամիլազները ենթարկվել են մասնակի մաքրման, որն իրականացվել է Bio-Rad-ի FPLC NGC Quest 10 Plus համակարգով՝ հիդրոքսիլապատիտային աշտարակով: SDS PAGE էլեկտրոֆորեզն իրականացվել է 0,1% SDS պարունակող 12,5% պոլիակրիլամիդային գելում (pH 8,3), Bio-Rad-ի ընթացակարգերի համաձայն: Amy1974 և Amy3500 ամիլազների զիմոգրամն իրականացվել է օգտագործվելով է 7,5% Նատիվ PAGE, էլեկտրոդների խցիկներում օգտագործվել է տրիս-գլիցինի բուֆեր՝ pH 8,3: Էլեկտրոֆորեզից հետո 0,5% լուծվող օսլա պարունակող 1% ազարոզային գելը 2-3 մմ շերտով ավելացվել է պոլիակրիլամիդային գելի վրա: Ստացված երկշերտ գելը բաժանվել է երկու մասի և ինկուբացվել է 55 °C ջերմաստիճանում 10 և 20 րոպե: Ինկուբացումից հետո այն 5 րոպե սենյակային ջերմաստիճանում թողնվել է Լուցոլի լուծույթում (յոդ - 5գ/լ, կալիումի յոդիդ - 10գ/լ): Գելի շերտերի մուգ կապույտ ֆոնի վրա պարզ սպիտակ-դեղնավուն գոտիների հայտնվելը համարվել է α-ամիլազային ակտիվության ցուցանիշ:

α-Ամիլազի կատալիտիկ բնութագրերի որոշման մեթոդներ: Ֆերմենտի ակտիվության կախվածությունը ջերմաստիճանից որոշելու համար ակտիվությունը չափվել է 35°C-ից մինչև 80°C ջերմաստիճաններում: Ֆերմենտի ակտիվության կախվածությունը pH-ից որոշվել է ցիտրատի, ֆոսֆատի և բորատի բուֆերային լուծույթներում (յուրաքանչյուրը 50 մՄ)՝ pH-ի 2-10 միջակայքում: Ջերմային կայունությունը որոշելու համար ֆերմենտային պատրաստուկը 20 րոպե ինկուբացվել է 35°C-ից մինչև 80°C ջերմաստիճաններում, այնուհետև սառեցվել մինչև 4°C, իսկ մնացորդային ակտիվությունները չափվել են վերը նկարագրված պայմաններում: Ֆերմենտի pH-ից կախված ջերմակայունությունը որոշվելու համար ֆերմենտային պատրաստուկը 20 րոպե ինկուբացվել է ցիտրատ, ֆոսֆատ և բորատ պարունակող բուֆերային լուծույթներում (յուրաքանչյուրը 20 մՄ)՝ pH-ի 2-10 միջակայքում, այնուհետև սառեցվել է մինչև 4°C, իսկ մնացորդային ակտիվությունը չափվել է վերը նկարագրված մեթոդով: Ուսումնասիրված ֆերմենտային պատրաստուկներով իրականացվող հիդրոլիզի ռեակցիայի խորությունը որոշելու համար կատարվել է 15% եգիպտացորենի օսլայի լուծույթի հիդրոլիզ 1 մՄ CaCl₂-ի առկայությամբ (pH 6,0):


Արտադրական պայմաններում α-ամիլազի շտամ-արտադրիչների ֆերմենտացման, ֆերմենտների անջատման և վերջնական ապրանքային տեսքի բերման պայմանները: Ռեկոմբինանտ α-ամիլազների պիլոտային արտադրությունը, կոլտուրալ հեղուկի խտացումը, մասնակի մաքրումը և չորացումը կատարվել է «Վիպեկո ԱՄ» ՄՊԸ-ի արտադրական բազայի հենքի վրա [<https://www.vipeco.am/hy>]: Ֆերմենտացիայի ավարտից հետո կոլտուրալ հեղուկը ցենտրիֆուգվել է հետագա փուլում արտաբջջային ֆերմենտ պարունակող հեղուկը ենթարկվել է ուլտրաֆիլտրացիայի, այնուհետև փորձարկվել են խտացված հեղուկի չորացման երկու եղանակներ՝ հեղուկացրային և լիոֆիլ չորացումներ: Ֆերմենտի կայունությունը բարձրացնելու նպատակով ֆերմենտային հեղուկին մինչև հեղուկացրային կամ լիոֆիլ չորացումը ավելացվել է 2% սախարոզ կամ 2% օսլա [Beek et al., 2015]: Իրականացվել է նաև ամոնիումի սուլֆատով ֆերմենտային հեղուկի ֆրակցիոնացում:

ԳԼՈՒԽ 3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

B. amyloliquefaciens MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների α -ամիլազի գեների կենսահինֆորմատիկական վերլուծություն: *B. subtilis* շտամի ZJ-1 α -ամիլազի գենի հիման վրա (GenBank-ի մուտքային համարը JX081246) նախագծված պրայմերային զույգերի միջոցով *B. amyloliquefaciens* MDC1974 շտամից (*amy1974*) մեկուսացված ԴՆԹ-ի ամպլիֆիկացմամբ սինթեզվել են նույն չափի ամպլիկոն: Հետագոտվող *amy1974* գենի Eurofins-ի վերծանած նուկլեոտիդային հաջորդականության համաձայն *amy1974* գենը 99% նույնականություն է ցուցաբերել *amyZJ-1* գենի նուկլեոտիդային հաջորդականության հետ (նկար 9), մինչդեռ նույն գեների կոդավորած սպիտակուցների ամինաթթվային հաջորդականությունների BLAST վերլուծությունը 100% նույնականություն է ցուցաբերում համապատասխան սպիտակուցների ամինաթթվային հաջորդականությունների միջև (GenBank մուտքային համարը AFN57616): Ըստ InterPro վերլուծության, *amy1974* գենը պատկանում է ջերմակայուն α -ամիլազների ընտանիքին (IPR013776): Այն պարունակում է ազդանշանային պեպտիդ (SIGNALP_GRAM_POSITIVE SignalP-TM), գլիկոզիլ հիդրոլազային 13 ընտանիքի կատալիտիկ դոմեն (IPR006047) և պրոկարիոտ α -ամիլազների հետ համընկնող C-ծայրային ամբողջովին բետա տիրոյթ (IPR015237) [Paysan-Lafosse et al., 2022]: Բացի այդ, իրականացված անալիզը ցույց է տալիս, որ այս սպիտակուցը պատկանում է գլիկոզիլ հիդրոլազների գերընտանիքին (IPR017853): *Amy1974sig*-ը (ազդանշանային պեպտիդով տարբերակ) պարունակում է 514 ամինաթթուներ և ունի 5,74 տեսական pI և 58,4 կԴա մոլեկուլային կշիռ, մինչդեռ *Amy1974*-ը (առանց ազդանշանային պեպտիդի) պարունակում է 483 ամինաթթուներ և ունի 54,8 կԴա մոլեկուլային կշիռ և 5,31 իզոէլեկտրիկ կետ, ըստ Expasy-ի հաշվարկների (https://web.expasy.org/compute_pi/): Այս հաշվարկները հիմնված են ազդանշանային պեպտիդների կտրման վայրի որոշման վրա SignalP-5.0 ծրագրաշարով (<https://services.healthtech.dtu.dk/services/SignalP-5.0/>), [Nielsen: et al., 2019]: Ստացված տեղեկատվությունն օգտագործվել է պրայմերային զույգեր կառուցելու նպատակով՝ *amy1974* գենը կլոնավորելու համար սեփական ազդանշանային պեպտիդով և առանց դրա:

B. subtilis MDC3500 շտամի 16S rRNA գենի նուկլեոտիդային հաջորդականությունը (GenBank՝ MT534524) 99% նույնականություն է ցուցաբերում *Bacillus* sp-ի KBS0812 շտամի համապատասխան ամինաթթվային հաջորդականության հետ (նկար 11), որի ամբողջական գենոմը հայտնի է (GenBank CP041757.1): *Bacillus* sp-ի KBS0812 շտամի ամբողջական գենոմից վերցված α -ամիլազի գենի հիման վրա ստեղծված պրայմերների զույգի կիրառմամբ *B. subtilis* MDC3500 (*amy3500*) շտամի ԴՆԹ-ից հնարավոր է եղել ամպլիֆիկացնել ֆունկցիոնալ թթվային α -ամիլազ: Այդ գենի Eurofins-ի վերծանած նուկլեոտիդային հաջորդականության համաձայն *amy3500* գենը 98% նույնականություն է ցուցաբերել համեմատած *Bacillus* sp. KBS0812 շտամի α -ամիլազի գենի հետ (նկար 13), մինչդեռ նույն գեների կոդավորած սպիտակուցների ամինաթթվային հաջորդականությունների BLAST վերլուծությունը 98% նույնականություն է ցուցաբերում համապատասխան սպիտակուցների ամինաթթվային հաջորդականությունների միջև (GenBank-ի մուտքային համարը OK490393):


B. amyloliquefaciens MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների α -ամիլազի գեների մոլեկուլային կլոնավորում *E. coli* / *B. subtilis* pBE-S մաքրքային վեկտորի կազմում: α -Ամիլազի գեների կլոնավորման համար գենի աղբյուր հանդիսացող *B. amyloliquefaciens* MDC1974 և *B. subtilis* MDC3500 շտամերից նախ անջատվել են գենոմային ԴՆԹ-ները, հետագայում նախագծված պրայմերային զույգերի կիրառմամբ ՊՇՌ-ի մեթոդով հաջողությամբ ամպլիֆիկացվել են համապատասխան ամիլազի գեները (նկար 1 Ա, Բ):



Նկար 1. Կլոնավորվող *amy1974*, *amy1974sig* (Ա) և *amy3500*, *amy3500sig* (Բ) գեների ամպլիֆիկացման էլեկտրաֆորեզամբ:

Ա - (1- *amy1974*, 2- *amy1974sig*, 3-ԴՆԹ լադեր՝ NebTriDye™ 1 kb Plus), Բ - (1 - *amy3500*, 2, 3 - *amy3500sig*, L - ԴՆԹ լադեր): *amy1974* - 1449 ն.գ., *amy1974sig* - 1542 ն.գ. *amy3500* - 1878 ն.գ., *amy3500sig* - 1974 ն.գ.

Ստացված ամպլիկոններն օգտագործվել են pBE-S վեկտորի կազմում բուրբ չորս տիպի α -ամիլազի գեների կլոնավորման համար: *B. amyloliquefaciens* MDC1974 շտամի *amy1974sig* և *amy1974* և *B. subtilis* MDC3500 շտամի *amy3500sig* և *amy3500* α -ամիլազի գեների pBE-S մաքրքային վեկտորի կազմում կլոնավորումն իրականացվել է Գիբսոնի համակցման մեթոդի միջոցով, որի մեր կողմից մշակված և օպտիմալացված տարբերակի ընդհանուր ընթացակարգը սխեմատիկորեն ներկայացված է նկար 2-ում:




Նկար 2. Գիբսոնի համակցման մեթոդով կլոնավորման ընթացակարգի սխեմատիկ պատկերը

Նախապես յուրաքանչյուր գենի դեպքում որոշվել են ՊՇՌ-ի իրականացման պայմանները: Ռեկոմբինանտ պլազմիդների յուրաքանչյուրի կառուցման նպատակով

Էքսպրեսիոն մաքրային վեկտորը գծայնացվել է XbaI և NdeI ռեստրիկցիոն ֆերմենտներով, ընդ որում փորձարկվել են 2 ռեստրիկտազների միաժամանակյա և հերթականությամբ ռեակցիան իրականացնելու պայմանները: NdeI ռեստրիկտազով 37°C ջերմաստիճանում 1 ժ տևողությամբ ռեակցիայի արդյունքում գծայնացված վեկտորը հետագայում XbaI ֆերմենտով ռեստրիկցիայի է ենթարկվել նույն պայմաններում: Ռեակցիաների ավարտից հետո ռեստրիկտազները ինակտիվացվել են 65°C ջերմաստիճանում 20 րոպե տևողությամբ ինկուբացմամբ: Կլոնավորման ռեակցիոն խառնուրդում գծայնացված վեկտորը և ամպլիֆիկացված գենը խառնվել են 1:2 մոլային հարաբերակցությամբ, համապատասխանաբար 0,03 և 0,06 պիկոմոլ ռեակցիոն խառնուրդի 10 մկլ-ում: Այնուհետև իրականացվել է α -ամփլազի գենի կլոնավորման ռեակցիան՝ օգտագործելով NEBuilder® HiFi DNA Assembly Master Mix-ը 50°C ջերմաստիճանում, ըստ արտադրողի ցուցումների:

Արտադրողի կողմից առաջարկված 15 րոպե ինկուբացման ժամկետը մեր փորձերում անբավարար է եղել: Լրացուցիչ փորձերի արդյունքում արտադրողի կողմից առաջարկվող ռեակցիայի իրականացման 15 րոպեն երկարացվել է մինչև 40 րոպե: Ռեակցիան կանգնեցվել է սառցային բաղնիքում: Արդյունքում ստացվել են pBE-S_amy1974sig, pBE-S_amy1974, pBE-S_amy3500sig և pBE-S_amy3500 չորս տեսակի ռեկոմբինանտ պլազմիդները: *E. coli* Top10-ի բջիջներում բազմացված pBE-S և pBE-S_amy1974 պլազմիդների էլեկտրոֆորեզրամաները ներկայացված են նկար 3-ում:




Նկար 3. *E. coli*-ի բջիջներում բազմացված pBE-S և pBE-S_amy1974 օղակաձև և գծայնացված պլազմիդների էլեկտրաֆորեզրամաները

(1)–ամբողջական pBE-S վեկտոր, (2)–XbaI ռեստրիկտազով կտրված pBE-S վեկտոր, (3)–pBE-S_amy1974 վեկտոր, (4)–XbaI ռեստրիկտազով կտրված pBE-S_amy1974 վեկտոր, (L)– λ -Ծ լադեր: pBE-S վեկտոր – 5938 ն.գ., pBE-S_amy1974 – 7387 ն.գ.

B. subtilis RIK 1285 շտամի բջիջների տրանսֆորմացմամբ *B. amyloliquefaciens* MDC 1974 և *B. subtilis* MDC 3500 շտամների արտազատվող α -ամփլազի գեները կրող *B. subtilis* RIK 1285_amy1974 և *B. subtilis* RIK 1285_amy3500 ռեկոմբինանտ շտամների ստացում: α -Ամփլազն արտազատող շտամ-արտադրիչների ստացման նպատակով *E. coli*-ի բջիջներում բազմացված pBE-S_amy1974sig, pBE-S_amy1974, pBE-S_amy3500sig և pBE-S_amy3500 պլազմիդներով տրանսֆորմացվել են *B. subtilis* RIK1285 շտամի բջիջները: Հաշվի առնելով, որ *B. subtilis* RIK1285 շտամն ունի աուքոտրոֆություն լիզին և տրիպտոֆան ամինաթթուների նկատմամբ, այդ շտամի կոմպետենտ բջիջներ ստանալու փուլում «Takara Bio»-ի առաջարկված կազամինաթթուները փոխարինվել են 40-ական մգ/լ L-լիզինով և L-տրիպտոֆանով: Մեթոդի համաձայն կոմպետենտ բջիջներին ավելացվում է օղակաձև պլազմիդը և 90ր դանդաղ թափահարվում պտտական ճոճանակի վրա: Մեր կողմից իրականացված բազմաթիվ փորձերը ցույց են

տվել, որ տրանսֆորմացում տեղի է ունենում միայն 90 րոպե թափահարելուց հետո ևս 60 րոպե ստատիկ պայմաններում թողնելու պարագայում:




Նկար 4. *B. subtilis* RIK1285_amy1974sig, *B. subtilis* RIK1285_amy1974 և *B. subtilis* RIK1285_amy3500sig և *B. subtilis* RIK1285_amy3500 տրանսֆորմանտների գաղութային ՊՇՈ-ի արդյունքները
 Ա-(1, 2) – amy1974sig, (3) – amy1974, (L) – Դ.Ն.Թ լաղեր, Բ-(1) – amy3500, (2-4) – amy3500sig, (L) – Դ.Ն.Թ լաղեր: amy1974sig – 1542 ն.գ., amy1974 – 1449 ն.գ., amy3500 – 1878 ն.գ., amy3500sig – 1974 ն.գ.

Նպատակային ամիլազների առավելագույն քանակների ստացման նպատակով *B. subtilis* RIK 1285_amy1974 և *B. subtilis* RIK 1285_amy3500 շտամների աճի միջավայրերի և ֆերմենտացման պայմանների օպտիմալացում: Ֆերմենտացման սննդամիջավայրի բաղադրության և պայմանների օպտիմալացումն ու ընտրությունն իրականացվել է օգտագործելով pBE-S_amy1974 առանց սեփական ազդանշանային պեպտիդ կրող շտամ-արտադրիչը [Soghomonyan, 2024]: Ֆերմենտացման միջավայրի և պայմանների օպտիմալացումը ներառում է ազոտի օրգանական աղբյուրի ընտրությունը, աերացիայի ինտենսիվությունը, կանամիցինի կոնցենտրացիան և ֆերմենտացման տևողությունը: Քանի որ նպատակային ամիլազների մյուս գեները կրող շտամ-արտադրիչները նույնպես կառուցվել են օգտագործվող էքսպրեսիոն համակարգի կիրառմամբ (pBE-S վեկտոր և *B. subtilis* RIK 1285 ռեցիպիենտ), ընտրված օպտիմալ պայմանները կիրառվել են ռեկոմբինանտ ամիլազների բոլոր շտամ-արտադրիչների դեպքում:

Նկար 5-ում ներկայացված են ռեկոմբինանտ շտամ արտադրիչների աճի և α -ամիլազի էքսպրեսիայի օպտիմալ պայմանների որոշման գրաֆիկները: Նկարից հետևում է, որ T7 և T8 միջավայրերը, համեմատած մյուս միջավայրերի հետ, ֆերմենտի զգալիորեն ավելի բարձր էքսպրեսիա են ապահովում: Ամիլազի ծավալային ակտիվությունը T8 սննամիջավայրում 48 ժամ անց հասնում է 740 միավոր/մլ արժեքին: Ստացված արդյունքներից հետևում է նաև, որ բոլոր հետազոտված միջավայրերում 48-րդ ժամի մոտակայքում ֆերմենտի ծավալային ակտիվության առավելագույն արժեք է դիտարկվում, որը հետագայում աստիճանաբար նվազում է: Նկար 5 Ա-ից հետևում է նաև, տրիպտոնի վրա հիմնված միջավայրերը (համեմատաբար ավելի մեծ չափսերի պեպտիդներ է պարունակում) համարժեք պայմաններում առավելություն ունեն պեպտոնի վրա հիմնված միջավայրերի նկատմամբ: Հետագայում որպես հիմք է ընդունվել ֆերմենտի առավելագույն էքսպրեսիա ապահովող խմորասնկային ավտոլիզատի վրա հիմնված T8 սննամիջավայրը: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ սեփական ազդանշանային պեպտիդի առկայության դեպքում (ամալիֆիկացվող գենում միաժամանակ առկա են լինում վեկտորից և ամիլազի գենից եկող ազդանշանային պեպտիդները) ֆերմենտի էքսպրեսիան մոտ երկու անգամ նվազում է: Դա կարող է կապված լինել կամ միևնույն արտազատման համակարգում երկու տարբեր ազդանշանային պեպտիդների պրոցեսինգի բարդությամբ, կամ էլ

տարբեր ֆերմենտների համար տեր օրգանիզմի կողմից տարբեր արտազատման համակարգերի գործարկմամբ:



Նկար 5. *Bacillus amyloliquefaciens* MDC1794 շտամի α -ամիլազի էքսպրեսիայի կախումը (Ա) – ֆերմենտման միջավայրում ազոտի աղբյուրի բնույթից, (Բ) – կլոնավորված գենում սեփական ազոտաշնային պեպտիդի առկայությունից, (Գ) – ֆերմենտման միջավայրի աերացիայի ինտենսիվությունից և (Դ) – միջավայրում կանամիցինի կոնցենտրացիայից
 (Ա) – 100 % ակտիվությունը համապատասխանում է *Amy1974*-ի 740 միավոր/մլ ծավալային ակտիվությանը, (Բ) – 100 % ակտիվությունը համապատասխանում է *Amy1974*-ի 1100 միավոր/մլ ծավալային ակտիվությանը, (Գ) – 100 % ակտիվությունը համապատասխանում է *Amy1974*-ի 1300 միավոր/մլ ծավալային ակտիվությանը, (ՏՄ՝ ֆերմենտման միջավայր) (Դ) – 100 % ակտիվությունը համապատասխանում է *Amy1974*-ի 1410 միավոր/մլ ծավալային ակտիվությանը:

Ստացված արդյունքները ցույց են տվել, որ աերացիայի ինտենսիվությունը էապես նպաստում է *B. amyloliquefaciens* MDC1794 շտամի ռեկոմբինատ α -ամիլազի էքսպրեսմանը 51-րդ ժամին 500 մլ կուլթայում 10 մլ ֆերմենտման միջավայրի դեպքում հասնելով 1300 միավոր/մլ: Նկար 26-ում ներկայացված է α -ամիլազի էքսպրեսման կախումը կանամիցինի կոնցենտրացիայից: Սննդարար միջավայրում 10 մգ/լ կանամիցինի առկայության դեպքում 48-րդ ժամին դիտվել է 1410 միավոր/մլ ամիլազային ակտիվություն, իսկ առանց կանամիցինի և 30 մգ/լ կանամիցինի առկայության դեպքում դիտվել է այդ ակտիվության 75 %-ից ավելին, ինչը վկայում է «Takara Bio»-ի pBE-S վեկտորի վրա հիմնված էքսպրեսիոն համակարգի բարձր սեղրեզացիոն և կառուցվածքային կայունության մասին:

Ստացված α -ամիլազային չորս շտամները ֆերմենտացվել են ընտրված օպտիմալ պայմաններում, 48 ժ տևողությամբ: *B. subtilis* RIK1285 ռեցիպիենտ շտամի էլային ամիլազային ակտիվությունը գնահատելու համար, այն ֆերմենտացվել է մինևայն պայմաններում (բացի սննդարար միջավայրում կանամիցինի առկայությունից): Ստացված արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:


**Ռեկոմբինանտ α -ամիլազների ստացված ակտիվությունները կուլտայում 48 ժամ
ֆերմենտացումից հետո**

Շտամ	α -ամիլազային	ակտիվություն
	Միավոր/մլ	Միավոր/մգ
<i>B. subtilis</i> RIK 1285_amy1974	1834±91	229,2±11.4
<i>B. subtilis</i> RIK 1285_amy1974sig	978±49	122,2±6.1
<i>B. subtilis</i> RIK 1285_amy3500	702±61	87,8±7.6
<i>B. subtilis</i> RIK 1285_amy3500sig	753±47	94,1±5.9
<i>B. subtilis</i> RIK 1285	25±7	3,1±0.9

Հետաքրքիր է, որ *B. subtilis* RIK 1285_amy1974-ի α -ամիլազային ակտիվությունը գրեթե կրկնակի ավել է եղել, համեմատած *B. subtilis* RIK 1285_amy1974sig-ի ակտիվության հետ: Պարզվել է, որ *B. subtilis* RIK 1285_amy3500 և *B. subtilis* RIK 1285_amy3500sig շտամների ակտիվությունները մոտ են իրար: Այնուամենայնիվ, ստացված բոլոր չորս շտամներն էլ զգալիորեն ավելի բարձր α -ամիլազային ակտիվություն են ցուցաբերել ռեցիպիենտ շտամի համեմատ:

Կուլտուրալ հեղուկներից ռեկոմբինանտ α -ամիլազների մասնակի մաքրման մեթոդների մշակում: α -Ամիլազային պատրաստուկների մասնակի մաքրումը կատարվել է FPLC սարքավորմամբ ստացված բոլոր ֆրակցիաներում չափվել են ֆերմենտային ակտիվությունները: Ամիլազներից Amy1974 և Amy1974sig տարբերակներում հիմնական ֆերմենտային ակտիվությունը (ավելի քան 90%) դիտվել է 7-րդ և 8-րդ ֆրակցիաներում, ընդ որում 7-րդ ֆրակցիան ավելի շատ ակտիվություն է ցուցաբերել, Amy1974-ը՝ 1400 միավոր/մգ, իսկ Amy1974sig-ը՝ 1000 միավոր/մգ: Ամիլազներից Amy3500 և Amy3500sig տարբերակներում համանման ձևով հիմնական ֆերմենտային ակտիվությունը (ավելի քան 90%) դիտվել է 7-րդ և 8-րդ ֆրակցիաներում, ընդ որում 7-րդ ֆրակցիան ավելի շատ ակտիվություն է ցուցաբերել, որտեղ տեսակարար ակտիվությունների հետևյալ արժեքներն են գրանցվել Amy3500-ի դեպքում 500 միավոր/մգ, Amy3500sig-ի դեպքում 600 միավոր/մգ:

FPLC-ով մասնակիորեն մաքրված Amy1974-ի α -ամիլազները, համապատասխան ստուգիչների հետ միասին, բնութագրվել են SDS-PAGE եղանակով: Amy1974 և Amy3500 ռեկոմբինանտ ամիլազների զիմոգրամն իրականացվել է կուլտեր և մեթոդներ բաժնում նկարագրված ընթացակարգի համաձայն: Որպես նմուշներ ընտրվել են երկու ֆերմենտների FPLC-ով մաքրված 7-րդ ֆրակցիաները: α -Ամիլազների SDS-PAGE և զիմոգրամի արդյունքները ներկայացված են նկար 6-ում:







Նկար 6. α -Ամիլազների SDS-PAGE և զիմոգրամի արդյունքները.

Ա – Amy1974 և Amy1974sig ֆերմենտների SDS-PAGE (1 – Amy1974-ի կոպիտ ֆերմենտային պրեպարատ, 2 – Amy1974sig-ի կոպիտ ֆերմենտային պրեպարատ, M – սպիտակուցային մարկերներ, 3 – Amy1974-ի FPLC-ով մաքրված 7-րդ ֆրակցիա, 4 – Amy1974sig-ի FPLC-ով մաքրված 7-րդ ֆրակցիա, 5 – Amy1974-ի FPLC-ով մաքրված 8-րդ ֆրակցիա, 6 – Amy1974sig-ի FPLC-ով մաքրված 8-րդ ֆրակցիա, 7 – B.

subtilis RIK1285-ի չմշակված արտաբջջային սպիտակուցներ: Բ – Amy3500 պատրաստուկների SDS-PAGE (1 – Amy3500-ի կոպիտ ֆերմենտային պրեպարատ, 2 – Amy3500sig-ի կոպիտ ֆերմենտային պրեպարատ, 3 – Amy3500-ի 7-րդ ֆրակցիա, 4 – Amy3500sig-ի 7-րդ ֆրակցիա, M – սպիտակուցային մարկերներ, 5 – Amy3500-ի 8-րդ ֆրակցիա, 6 – Amy3500sig-ի 7-րդ ֆրակցիա, 7 – RIK1285-ի չմշակված արտաբջջային սպիտակուցներ, Գ – Տրամաչափման կոր Amy1974 տարբերակների մոլեկուլային կշիռների հաշվարկման համար, Դ – Amy1974 (1, 3, և 5) և Amy3500 (2, 4 և 6) α -ամիլազների զիմոգրամները, որտեղ I-ը ներկայացնում է Նատիվ PAGE-ը, իսկ II-ը և III-ը զիմոգրամներն են՝ համապատասխանաբար 10 րոպե և 20 րոպե ինկուբացումներից հետո, Ե – տրամաչափման կոր Amy3500 տարբերակների մոլեկուլային կշիռների հաշվարկման համար:

Մինթեզված արտազատվող ռեկոմբինանտ ֆերմենտների ֆիզիկաքիմիական և կատալիտիկ բնութագրերի ուսումնասիրում: Հետազոտվել են ստացված ռեկոմբինանտ Amy1974 և Amy3500 α -ամիլազների մի շարք կատալիտիկ բնութագրեր, ինչպիսիք են՝ ֆերմենտի ակտիվության կախումը ջերմաստիճանից և միջավայրի pH-ից, ջերմակայունությունը, ջերմակայունության կախումը միջավայրի pH-ից: Այդ ցուցանիշների իմացությունը կարևոր է ֆերմենտների արդյունավետ կիրառման ոլորտները ուրվագծելու համար: Amy1974 α -ամիլազի մի շարք ֆիզիկաքիմիական պարամետրեր բերված են նկար 7-ում: Ինչպես երևում է նկար 7-Ա-ից, Amy1974 α -ամիլազն ունի ակտիվության լայն տիրույթ՝ 50°C-ից մինչև 70°C ջերմաստիճանային միջակայքում: Ֆերմենտն իր առավելագույն ակտիվությանն է հասնում 65°C ջերմաստիճանում: Ֆերմենտային ակտիվության pH-ից կախվածության ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ վերջինս բարձր ակտիվություն է ցուցաբերում pH-ի լայն տիրույթում՝ 4,7-ից 7,9, իսկ առավելագույն ակտիվությունը դիտվում է pH 6,5-ում: Ինչպես ցույց է տրված նկար 7-ում, Amy1974 ֆերմենտն ավելի մեծ կայունություն է ցուցաբերում pH-ը 6,5-ից 8,2 տիրույթում, իսկ առավելագույն ջերմակայունությունը ֆերմենտը ցուցաբերում է pH 7,6-ում:







Նկար 7. Amy1974 α-ամիլազի կատալիտիկ բնութագրերը.

(U) – ակտիվության կախումը ջերմաստիճանից, (P) – ակտիվության կախումը pH-ից, (F) – ջերմակայունությունը, (G) – ջերմակայունության կախվածությունը pH-ից

Amy3500 α-ամիլազի մի շարք ֆիզիկաքիմիական պարամետրեր բերված են նկար 8-ում: Ինչպես երևում է նկար 8-ի (U)-ից Amy3500 α-ամիլազն ունի ակտիվության լայն տիրույթ՝ 60°C-ից 70°C ջերմաստիճանային միջակայքում, առավելագույն ակտիվություն է ցուցաբերում 65°C ջերմաստիճանում: Ֆերմենտային ակտիվության pH-ից կախվածության ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ վերջինս բարձր ակտիվություն է ցուցաբերում pH-ի լայն տիրույթում՝ 5-ից 7,5, իսկ առավելագույնը pH 5,8-ում (P):


